



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՍՈՒՐԱԴԽԱՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(զանգատ թիվ 12895/06)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

5 հունիսի 2012թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

5/09/2012

*Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի
համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*



Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեյալ կազմով՝

Ջուսեփ Կասադեվալ [Josep Casadevall]՝ Նախագահ,

Կորնելիոս Բիրսան [Corneliu BTrsan],

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Էլսբերտ Մայեր [Egbert Myjer],

Յան Շիկուտա [Jan Sikuta],

Լուիս Լոպես Գեռա [Luis Lopez Guerra],

Նոնա Ցոցորիա [Nona Tsotsoria]՝ *դատավորներ,*

եւ Մարիալենա Ցիրլի [Marialena Tsirli]՝ *Բաժանմունքի քարտուղարի
տեղակալ,*

2012 թվականի մայիսի 15-ին անցկացնելով դոնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ
հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Արարատ
Մուրադխանյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝
2006 թվականի մարտի 27-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 12895/06)
հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Երեւանում գործող իրավաբան
պրն Լ. Սիմոնյանը եւ Ստրասբուրգում գործող իրավաբան պրն Ք. Մեյերը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2007 թվականի դեկտեմբերի 12-ին Երրորդ բաժանմունքի նախագահը որոշել է գանգատի մասին ծանուցել Կառավարությանը: Որոշվել է նաեւ միեւնույն ժամանակ ուսումնասիրել գանգատի ընդունելիության եւ ըստ էության քննության հարցերը (Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1963 թվականին եւ այժմ կրում է իր պատիժը քրեակատարողական հիմնարկում:

1. *Դիմումատուի դեմ երկու քրեական վարույթների հարուցումը Հայաստանում եւ Ուկրաինայում*

ա) Դիմումատուի դեմ քրեական վարույթի հարուցումը Հայաստանում

5. 2002 թվականի հունիսի 24-ին դիմումատուի դեմ հարուցվել է թիվ 12207102 քրեական գործով վարույթը՝ նույն օրը Երեւանում դիտավորությամբ կատարված՝ մի քանի անձանց սպանության փաստի առթիվ: Դիմումատուն, որի գտնվելու վայրը անհայտ է եղել, կասկածվել է այդ սպանությունների կատարման մեջ:

6. 2002 թվականի հուլիսի 5-ին նախկին Քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն՝ դիմումատուին մեղադրանք է առաջադրվել ապօրինի

կերպով զենք պահելու համար, որից հետո քննիչի կողմից ներկայացվել է դիմումատուին կալանավորելու միջնորդություն:

7. Նույն օրը Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարանը դիմումատուի բացակայությամբ բավարարել է միջնորդությունը եւ որոշում է կայացրել նրա նկատմամբ կիրառել կալանք՝ երկու ամիս ժամկետով, նշելով հետեւյալը.

«Ուսումնասիրելով քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը եւ քրեական գործի նյութերը, հաշվի առնելով վերագրված հանցանքի ծանրությունն ու բնույթը եւ այն փաստը, որ մեղադրյալի կատարած հանցագործության համար նախատեսված միակ պատիժը ազատազրկումն է՝ դատարանը հանգել է այն եզրակացության, որ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են՝ ենթադրելու, որ միջնորդությունը պետք է բավարարվի, քանի որ մեղադրյալը թաքնվում է վարույթն իրականացնող մարմնից, եւ նրա գտնվելու վայրն անհայտ է»:

8. Քանի որ դիմումատուի գտնվելու վայրն անհայտ է եղել, նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

9. 2002 թվականի սեպտեմբերի 11-ին ՀՀ գլխավոր դատախազությունը փոխել է դիմումատուի դեմ առաջադրված մեղադրանքը եւ նրան մեղադրել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 99-րդ, 15-99-րդ եւ 232-րդ հոդվածների համաձայն՝ սպանության, սպանության փորձ կատարելու եւ ապօրինի կերպով զենք պահելու հիմքով:

10. 2002 թվականի հոկտեմբերի 25-ին դիմումատուի դեմ հարուցված քրեական վարույթը կասեցվել է, քանի որ նրա գտնվելու վայրը հնարավոր չի եղել պարզել:

**բ) Ղիմումատուի կալանավորումը Ուկրաինայում՝ այլ քրեական
մեղադրանքի առնչությամբ**

11. Չպարզված ամսաթվին Ուկրաինայում հարուցվել է թիվ 01710009 քրեական գործով վարույթը՝ 2001 թվականի մարտի 31-ին Պոլտավայում (Ուկրաինա) մի անձի սպանության փաստի առթիվ:

12. Ըստ ղիմումատուի՝ 2003 թվականի հունվարի 24-ին նա Վորոնեժում (Ռուսաստան) ձերբակալվել է Ուկրաինայի իրավապահ մարմինների կողմից եւ բռնի ուժով տեղափոխվել Պոլտավա, որտեղ 2003 թվականի հունվարի 27-ին կալանավորվել է:

13. 2003 թվականի հունվարի 30-ին Պոլտավայի Կիեյան վարչական շրջանի դատարանը կայացրել է ղիմումատուին կալանավորելու վերաբերյալ որոշում:

14. 2003 թվականի մարտի 13-ին ղիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել Ուկրաինայի քրեական օրենսգրքի 115-րդ եւ 129-րդ հոդվածների համաձայն՝ սպանության եւ սպանության սպառնալիքի հիմքով:

15. Հայտնի է, որ դրանից հետո ուկրաինական դատարանները մի քանի անգամ երկարացրել են ղիմումատուի նկատմամբ կիրառված կալանքի ժամկետը:

16. 2004 թվականի հունվարի 30-ին ՀՀ գլխավոր դատախազությունը պահանջել է ղիմումատուին հանձնել Հայաստանի Հանրապետությանը՝ թիվ 12207102 քրեական գործի առնչությամբ:

17. 2004 թվականի ապրիլի 12-ին Ուկրաինայի իշխանությունները որոշում են կայացրել ղիմումատուին հանձնել Հայաստանին եւ թիվ 01710009 քրեական գործը փոխանցել Հայաստանի Հանրապետության իշխանություններին՝ հետագա քննություն իրականացնելու համար:

2. *Ղիմումատուի նկատմամբ կիրառված կալանքը Հայաստանի
Հանրապետությունում*

ա) Մինչդատական վարույթի ընթացքում ղիմումատուի
նկատմամբ կիրառված կալանքը

18. 2004 թվականի մայիսի 18-ին ղիմումատուին հանձնել են Հայաստանի Հանրապետությանը, որտեղ նա անմիջապես կալանավորվել է:

19. 2004 թվականի մայիսի 24-ին թիվ 12207102 քրեական գործով վարույթը վերսկսվել է:

20. 2004 թվականի հունիսի 21-ին ղիմումատուին առաջադրված մեղադրանքը փոխվել է եւ համապատասխանեցվել է 2003 թվականի օգոստոսին ընդունված նոր Քրեական օրենսգրքին: Քրեական օրենսգրքի 104-րդ, 34-104-րդ եւ 235-րդ հոդվածների համաձայն՝ ղիմումատուին առաջադրվել է մեղադրանք մի քանի անձանց սպանության եւ սպանության փորձի, ապօրինի կերպով զենք պահելու համար:

21. 2004 թվականի հուլիսի 12-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարանը քննել ու բավարարել է քննիչի միջնորդությունը՝ կալանքի ժամկետը, որը պետք է լրանար 2004 թվականի հուլիսի 18-ին, եւս երկու ամսով՝ մինչեւ 2004 թվականի սեպտեմբերի 18-ը երկարացնելու մասին: Համայնքային դատարանը որոշել է, որ կալանքի ժամկետի երկարացումը անհրաժեշտ է մի շարք քննչական գործողություններ իրականացնելու համար: Այդպիսի գործողությունները, ըստ քննիչի, ներառել են ղիմումատուին երեք վկաների ճանաչմանը ներկայացնելը, նրանց հետագա հարցաքննումը, ղիմումատուի եւ այդ վկաների միջեւ հնարավոր առերեսումները, մի շարք դատաբժշկական փորձաքննություններ եւ սպանության համար օգտագործված զենքը հայտնաբերելուն ուղղված գործողություններ:

22. Նույն օրը գործը քննող քննիչը եզրակացրել է, որ թիվ 01710009 քրեական գործի քննությունն անհնար է շարունակել ՀՀ տարածքում, եւ որոշել է այդ գործը վերադարձնել Ուկրաինայի իշխանություններին:

23. 2004 թվականի սեպտեմբերի 13-ին թիվ 12207102 քրեական գործի քննությունն ավարտվել է, եւ դիմումատուին հնարավորություն է տրվել ծանոթանալու գործի նյութերին մինչեւ 2004 թվականի սեպտեմբերի 23-ը:

բ) Դատական վարույթի ընթացքում դիմումատուի նկատմամբ կիրառված կալանքը

24. 2004 թվականի սեպտեմբերի 24-ին գործը փոխանցվել է Երեւան քաղաքի էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների դատարան՝ գործի ըստ էության քննություն իրականացնելու համար:

25. 2004 թվականի հոկտեմբերի 6-ին Համայնքային դատարանը որոշում է կայացրել գործը դատական քննության նշանակելու մասին՝ առաջին դատական նիստը նշանակելով 2004 թվականի հոկտեմբերի 14-ին: Այս որոշման մեջ նաեւ նշվել է, որ «մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը պետք է թողնել անփոփոխ»:

26. 2004 թվականի հոկտեմբերի 14-ից մինչեւ 2005 թվականի հոկտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում Համայնքային դատարանն անցկացրել է 52 դատական նիստ՝ առավելագույնը մեկ ու կես ամիս ընդմիջումներով, որոնց ընթացքում բազմաթիվ վկաներ են հարցաքննվել, ու ապացույցներ են քննության ենթարկվել: Այս ամբողջ ժամանակահատվածում դիմումատուն մնացել է կալանքի տակ:

գ) Գործը լրացուցիչ քննության վերադարձները

27. 2005 թվականի հոկտեմբերի 14-ին Երեւան քաղաքի էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների դատարանը որոշել է գործը վերադարձնել լրացուցիչ քննության: Դատարանը գտել է, որ քննչական մարմինը չի կարողացել ապահովել գործի արդար քննությունը եւ կատարել օբյեկտիվ ու բազմակողմանի նախաքննություն: Այդպիսի հանգամանքներում դատարանը մեղադրյալի

մեղավորության եւ անմեղության վերաբերյալ օբյեկտիվ եզրակացության հանգելու հնարավորություն չի ունեցել, եւ այդ բացթողումները դատավարության ընթացքում հնարավոր չի եղել շտկել: Համայնքային դատարանն իր որոշման մեջ նաեւ նշել է, որ «կալանքը պետք է թողնել անփոփոխ»:

28. Դիմումատուն, դատախազը եւ տուժողները վերաքննիչ բողոք են ներկայացրել այս որոշման դեմ: Իր բողոքի մեջ դիմումատուն պնդել էր, *inter alia* (*հ թիվս այլնի*), որ Համայնքային դատարանը կալանքը երկարացնելու իր որոշման մեջ պատճառներ չի նշել եւ հաշվի չի առել այն հանգամանքը, որ ինքը 2003 թվականից գտնվել է կալանքի տակ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտմամբ:

29. 2005 թվականի նոյեմբերի 9-ին Քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանը Համայնքային դատարանի որոշումը թողել է անփոփոխ՝ ավելացնելով, որ «դիմումատուին կալանքի տակ պահելու հիմքերը դեռ առկա են»:

30. Դիմումատուն, դատախազը եւ տուժողները վճռաբեկ բողոք են ներկայացրել այս որոշման դեմ: Վճռաբեկ բողոքի մեջ դիմումատուն կրկնել է իր՝ Համայնքային դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ ներկայացրած բողոքի փաստարկները:

31. 2005 թվականի հոկտեմբերի 16-ին Վճռաբեկ դատարանը որոշել է բողոքը թողնել առանց քննության՝ գտնելով, որ այն չի համապատասխանում պաշտոնապես ձեւակերպված պահանջներին: Վճռաբեկ դատարանը նաեւ ավելացրել է, որ դիմումատուի կալանքը «պետք է թողնել անփոփոխ»:

32. 2005 թվականի դեկտեմբերի 26-ին գործի նյութերը փոխանցվել են Գլխավոր դատախազություն:

33. 2005 թվականի դեկտեմբերի 27-ին քննիչը գործն ընդունել է վարույթ եւ ներկայացրել դիմումատուի կալանքը երկու ամսով՝ մինչեւ 2006 թվականի փետրվարի 28-ը, երկարացնելու մասին միջնորդություն: Միջնորդության մեջ նշվել է, որ դիմումատուն մինչդատական կալանքի տակ է գտնվել 2004 թվականի մայիսի 18-ից մինչեւ սեպտեմբերի 13-ը, մինչդեռ նրա նկատմամբ կալանքի կիրառումը

թույլատրված է եղել մինչև 2004 թվականի սեպտեմբերի 18-ը: Սա դիմումատուի մինչդատական կալանքի ժամկետի երկարացմանն ուղղված երկրորդ միջնորդությունն էր: Դիմումատուի կալանքի ժամկետը երկարացնելն անհրաժեշտ էր՝ հաշվի առնելով մի շարք քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը, այն փաստը, որ դիմումատուն կատարել էր ծանր հանցագործություն եւ ազատության մեջ մնալով՝ կարող էր խոչընդոտել գործի քննությունը եւ դիմել փախուստի, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ դիմումատուի կալանքի ժամկետը լրանալու էր 2005 թվականի դեկտեմբերի 30-ին:

34. 2005 թվականի դեկտեմբերի 29-ին դիմումատուն այս միջնորդության դեմ առարկություններ է ներկայացրել: Նա պնդել է, *inter alia*, որ միջնորդությունը ներկայացվել է Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետների խախտմամբ (տե՛ս ստորել՝ 54-րդ պարբերությունը): ՔԴՕ-ի համապատասխան դրույթների համաձայն՝ մինչդատական վարույթի ընթացքում կալանքը կարող է կիրառվել կամ երկարացվել միայն դատարանի կողմից՝ քննիչի միջնորդությամբ: Վերջին անգամ դիմումատուի նկատմամբ կիրառված կալանքի ժամկետը երկարացվել է 2004 թվականի հուլիսի 12-ին՝ մինչև 2004 թվականի սեպտեմբերի 18-ը: Անգամ եթե ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետները հաշվարկվեին Վճռաբեկ դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրած որոշման օրվանից, միեւնույն է խախտում առկա էր, քանի որ այդ օրվանից արդեն անցել էր 13 օր: Ինչ վերաբերում է քննիչի այն փաստարկին, որ կալանքի ժամկետը լրանալու էր 2005 թվականի դեկտեմբերի 30-ին, ապա դա ճիշտ չէ, քանի որ կալանքի ժամկետը լրացել էր 2004 թվականի սեպտեմբերի 18-ին: Կալանքի ժամկետի լրանալու եւ չերկարացվելու դեպքում ՔԴՕ-ն պահանջում է ազատ արձակել կալանավորվածին: Տվյալ դեպքում անգամ պարզ չէ, թե որ դատարանի որոշմամբ սահմանված որ կալանքի ժամկետն էր երկարացվում: Դիմումատուն կալանքի տակ էր պահվում առանց դատարանի որոշման: Ի վերջո, դիմումատուն դատարանին խնդրել էր նշել դատական այն որոշումը, որի համաձայն իր կալանքի ժամկետը պետք է լրանար 2005 թվականի դեկտեմբերի 30-ին:

35. Նույն օրը Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարանը բավարարել է այս միջնորդությունը՝ գտնելով հետեւյալը.

«Ուսումնասիրելով քննիչի միջնորդությունը եւ քրեական գործի նյութերը, լսելով մեղադրյալին եւ նրա դատապաշտպանին՝ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է երկարացնել (դիմումատուի) կալանքի ժամկետը մի շարք քննչական գործողություններ կատարելու նպատակով ...»:

36. 2006 թվականի հունվարի 10-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել, որում շարադրել է իր առարկություններում ներկայացված նույնանման փաստարկներ: Ի հավելումն, նա նաեւ նշել է, որ Համայնքային դատարանի որոշումը պատճառաբանված չի եղել, եւ որ դատարանը չի անդրադարձել բողոքում ներկայացված իր փաստարկներին:

37. 2006 թվականի փետրվարի 3-ին Քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանը գտել է, որ Համայնքային դատարանի կայացրած որոշումը պատճառաբանված է եղել, եւ որոշել է ուժի մեջ թողնել այն: Որոշման մեջ նշվել է, որ այն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

38. 2006 թվականի փետրվարի 9-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել՝ բարձրացնելով նույնանման փաստարկներ:

39. Վճռաբեկ դատարանի կարգավիճակի հետ կապված սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելու առնչությամբ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմանը համապատասխան՝ Վճռաբեկ դատարանի նախագահը 2006 թվականի փետրվարի 27-ի գրությամբ վերադարձրել է բողոքը՝ թողնելով այն առանց քննության:

40. 2006 թվականի փետրվարի 23-ին եւ ապրիլի 26-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարանը քննիչի համապատասխան միջնորդությունների հիման վրա, երկարացրել է դիմումատուի կալանքի ժամկետը: Ի հավելումն վերը նշված հիմքերի, Համայնքային դատարանը նշել է, որ

ազատ արձակվելու դեպքում դիմումատուն կարող է դիմել փախուստի եւ խոչընդոտել գործի քննությունը՝ հակաօրինական ազդեցություն գործադրելով քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա:

41. 2006 թվականի մարտի 21-ի եւ 23-ի համապատասխան որոշումներով Քրեական եւ ռազմական գործերով վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել այդ որոշումները: Վերաքննիչ դատարանը նաեւ նշել է, որ դիմումատուն մեղադրվում է առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ, որ նա մինչ այդ դիմել է փախուստի, եւ նրա նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել, եւ որ ազատ արձակվելու դեպքում նա կարող է խոչընդոտել գործի քննությունը եւ դիմել փախուստի:

42. 2006 թվականի մայիսի 4-ին Վճռաբեկ դատարանը, ըստ երեւույթին նույն պատճառներով, որոշել է Վերաքննիչ դատարանի 2006 թվականի մարտի 21-ի որոշման դեմ դիմումատուի ներկայացրած վճռաբեկ բողոքը նորից թողնել առանց քննության:

դ) Դատական վարույթի վերսկսումը եւ դիմումատուի դատապարտումը առաջին ատյանում

43. 2006 թվականի մայիսի 24-ին գործը փոխանցվել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարան՝ ըստ էության քննություն իրականացնելու համար:

44. 2006 թվականի մայիսի 25-ին դիմումատուն Համայնքային դատարանից պահանջել է դադարեցնել իր նկատմամբ քրեական հետապնդումը եւ ազատ արձակել իրեն:

45. 2006 թվականի հունիսի 2-ին դատարանը գործը դատական քննության նշանակելու վերաբերյալ որոշում է կայացրել եւ առաջին դատական նիստը նշանակել 2006 թվականի հունիսի 19-ին: Համայնքային դատարանն իր որոշման մեջ նշել է, որ կալանքը պետք է թողնել անփոփոխ:

46. Անհայտ պատճառներով 2006 թվականի հունիսի 19-ին նշանակված դատական նիստը անորոշ ժամկետով հետաձգվել է:

47. 2006 թվականի հոկտեմբերի 16-ին Համայնքային դատարանն անցկացրել է դիմումատուի գործով առաջին դատական նիստը: Դրան հաջորդել են 2006 թվականի հոկտեմբերի 17-ին եւ 18-ին կայացած դատական նիստերը: Համայնքային դատարանը հետագա դատական նիստերն անցկացրել է 2006 թվականի նոյեմբերի 14-16-ը, 20-ին եւ 22-23-ը:

48. 2006 թվականի նոյեմբերի 20-ին կայացած դատական նիստի ժամանակ դիմումատուն ու իր փաստաբանները բանավոր պահանջել են փոխել դիմումատուի նկամամբ կիրառված խափանման միջոցը եւ ազատ արձակել նրան, *inter alia*, այն հիմքով, որ նրա կալանքի ժամկետը երկարաձգվել էր:

49. Նույն օրը Համայնքային դատարանը որոշել է մերժել այս պահանջը՝ նշելով հետեւյալը.

«[Դիմումատուն] մեղադրվել է Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 6-րդ կետերով, 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 6-րդ կետերով եւ 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ: Քննության ընթացքում դատարանի որոշումով որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Վարույթի տվյալ փուլում վերը նշված որոշման հիմքերը դեռեւս պահպանվում են....»:

50. Հետագա դատական նիստերն անցկացվել են 2006 թվականի նոյեմբերի 22-ին եւ 23-ին, 2006 թվականի դեկտեմբերի 11-13-ը, 2007 թվականի հունվարի 16-ին, 17-ին եւ 30-ին, 2007 թվականի փետրվարի 1-ին, 14-16-ը, 26-ին եւ 27-ին, 2007 թվականի մարտի 28-ից ապրիլի 2-ը: Ապրիլի 2-ին Համայնքային դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ, սակայն որոշել է դատաքննությունը վերսկսել 2007 թվականի ապրիլի 12-ին: Հաջորդ դատական նիստերը տեղի են ունեցել 2007 թվականի հունիսի 27-ին, հուլիսի 11-ին, 26-ին եւ օգոստոսի 21-ին, վերջինից հետո Համայնքային դատարանը կրկին հեռացել է խորհրդակցական սենյակ:

51. 2007 թվականի սեպտեմբերի 24-ին Երեւան քաղաքի համայնքային

[վարչական շրջանի] դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել եւ նրան դատապարտել ցմահ ազատազրկման: Վարույթի ընթացքում հարցաքննվել են նվազագույնը 37 վկաներ, եւ իրականացվել են մի շարք քննչական գործողություններ, այդ թվում նաեւ դատաբժշկական եւ այլ փորձաքննություններ:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Ա. Սահմանադրություն (2005 թվականին կատարված փոփոխություններով)

52. 92-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները եւ վճռաբեկ դատարանը: Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

Բ. Քրեական օրենսգիրք (ուժի մեջ է 2003 թվականի օգոստոսի 1-ից)

52. Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածները սահմանում են հետևյալը.

Հոդված 34. Հանցափորձ

«Հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով»:

Հոդված 104. Սպանություն

«2. Սպանությունը՝ 1) երկու կամ ավելի անձանց... 6) [կատարված] շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով... պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ»:

Հոդված 235. Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը

«1. Ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից եւ դրա փամփուշներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Գ. Քրեական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 12-ից)

54. ՔԴՕ-ի համապատասխան հոդվածները, որոնք ուժի մեջ էին տվյալ ժամանակահատվածում, սահմանում են հետևյալը.

Հոդված 65. Մեղադրյալի իրավունքներն ու պարտականությունները

«2. Մեղադրյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի... 12) հարուցել միջնորդություններ...»:

Հոդված 134. Խափանման միջոցների հասկացությունը եւ տեսակները

«1. Խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու եւ դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:

2. Խափանման միջոցներն են՝ 1) կալանավորումը, 2) գրավը...

3. Կալանավորումը եւ գրավը կարող են կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ...

4. ...Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց եւ կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին»:

Հոդված 135. Խափանման միջոց կիրառելու հիմքերը

«1. Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝ 1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից. 2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությունը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով. 3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք. 4) խուսափել քրեական պատասխանատվությունից եւ նշանակված պատիժը կրելուց. 5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարումը»:

2. Կալանավորումը եւ դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատազրկման ձեռով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները»:

3. Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության եւ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝ 1) վերագրվող արարքի բնույթը եւ վտանգավորության աստիճանը. 2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը. 3) տարիքը եւ առողջական վիճակը. 4) սեռը. 5) զբաղմունքի տեսակը. 6) ընտանեկան դրությունը եւ խնամարկյալների առկայությունը. 7) գույքային դրությունը. 8) բնակության մշտական վայրի առկայությունը. 9) այլ էական հանգամանքներ»:

Հոդված 136. Խափանման միջոց կիրառելու կարգը

«2. Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս: Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել

նաեւ պաշտպանության կողմի միջնորդությամբ»:

Հոդված 137. Կալանավորումը

«1. Կալանավորումը օրենքով նախատեսված տեղերում եւ պայմաններում անձին կալանքի տակ պահելն է:

...

4. Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը եւ, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը...

5. Կալանավորումը որպէս խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան»:

Հոդված 138. Կալանքի տակ պահելու ժամկետը

«1. Մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը հաշվվում է ձերբակալելիս անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից, իսկ եթե նա չի ձերբակալվել, ապա այդ խափանման միջոցն ընտրելու մասին դատարանի որոշումը կատարելու պահից:

...

3. Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող լինել 2 ամսից ավելի, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի ...Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան, կամ մեղադրյալը կամ նրա պաշտպանը ծանոթանում են գործի նյութերին, կամ կալանավորումը որպէս խափանման միջոց վերացվում է:

4. Քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը դատարանի կողմից, հաշվի առնելով գործի առանձնակի բարդությունը, կարող է երկարացվել մինչեւ 1 տարի:

5. Քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել...1 տարին...

6. Դատարանում գործի քննության ընթացքում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ չի սահմանվում»:

Հոդված 139. Կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումը

«1. Մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը, դատախազը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 10 օր առաջ, պետք է դատարան ներկայացնեն պատճառաբանված միջնորդություն: Դատարանը, համաձայնվելով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտությանը, ոչ ուշ, քան դատարանի կալանքի տակ պահելու որոշած ժամկետը լրանալուց 5 օր առաջ, համապատասխան որոշում է կայացնում:

2. Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցը որոշելիս դատարանն իրավունք ունի ճանաչել մեղադրյալին գրավով ազատելու հնարավորությունը եւ նշանակել գրավի գումարը:

3. Մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշում կայացնելիս դատարանը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնում է սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում՝ յուրաքանչյուր դեպքում 2 ամսից ոչ ավելի ժամանակով»:

Հոդված 288. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության եւ հիմնավորվածության դատական ստուգումը

«1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաեւ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության եւ հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից»:

Հոդված 292. Գործը դատական քննության նախապատրաստելիս ընդունվող որոշումները

«Քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետազոտում է գործի նյութերը եւ քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետեւյալ որոշումներից մեկը. 1) դատական քննություն նշանակելու մասին...»:

Հոդված 293. Դատական քննություն նշանակելու մասին որոշումը

«2. Դատական քննություն նշանակելու մասին որոշման մեջ պետք է բովանդակվեն... որոշում՝ խափանման միջոցները...վերացնելու, փոխելու կամ ընտրելու

մասին...»:

Հոդված 300. Որոշում՝ խափանման միջոցների մասին

«Որոշումներ կայացնելու հետ միաժամանակ...դատարանը պարտավոր է քննել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու եւ դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում»:

Հոդված 311. Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելը

«Դատարանը գործն ուղարկում է լրացուցիչ նախաքննության՝

1) երբ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից թույլ է տրված քրեադատավարական օրենքի էական խախտում, եթե դա չի կարող վերացվել դատական քննության ընթացքում.

2) մեղադրողի միջնորդությամբ, երբ առկա են մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր»:

Հոդված 312. Խափանման միջոցի հարցի լուծումը

«Դատարանը, դատական քննության ժամանակ, լսելով ամբաստանյալի բացատրությունները, կողմերի կարծիքները, իրավունք ունի ամբաստանյալի նկատմամբ ընտրել, փոխել կամ վերացնել խափանման միջոցը»:

Հոդված 403. Դատավճռի ու որոշումների վերանայումը վճռաբեկության կարգով [գործի քննության ժամանակ եղած խմբագրությամբ]

«Վճռաբեկության կարգով վերանայվում են առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռները եւ որոշումները, ինչպես նաեւ վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատավճիռները եւ որոշումները:

Դ. Դատարանների նախագահների խորհրդի՝ 2000 թվականի փետրվարի 12-ի թիվ 20 որոշում

55. Այս որոշման 4-րդ կետում սահմանված է, որ ՔԴՕ-ի 137-րդ հոդվածի 5-րդ

մասում ամրագրված է, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան: Սակայն ՔԴՕ-ն չի կարգավորել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու ընթացակարգը: Ուստի նման դեպքերում Վերաքննիչ դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան:

Ե. Դատարանների նախագահների խորհրդի՝ 2005 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 83 որոշում

56. Այս որոշումը սահմանում է, որ Դատարանների նախագահների խորհրդի՝ 2000 թվականի փետրվարի 12-ի թիվ 20 որոշման 4-րդ կետը պետք է վերացվի՝ հաշվի առնելով, որ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը՝ որպես բարձրագույն իրավասության դատարան, կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

Զ. Դատարանների նախագահների խորհրդի՝ 2006 թվականի ապրիլի 5-ի թիվ 96 որոշում

57. Այս որոշումը սահմանում է Դատարանների նախագահների խորհրդի թիվ 20 որոշման 4-րդ կետի նոր տեքստը, ըստ որի Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ բարձրագույն դատական ատյանը Վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Այդ պայմաններում օրինական ուժի մեջ չմտած մինչդատական վարույթի ընթացքում կայացված որոշումների, այդ թվում կալանավորման ցանկացած որոշման բողոքարկումը բարձրագույն դատական ատյան, չի բխում նրա սահմանադրական կարգավիճակից: Այդպիսի բողոքները պետք է թողնվեն առանց քննության: Բացառիկ դեպքերում նման բողոքները Վճռաբեկ դատարանի քննարկման առարկա պետք է դառնան, եթե այդ հարցն ունի սկզբունքային նշանակություն դատական պրակտիկայի համար: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանի քննարկմանը ենթակա են այն որոշումների դեմ բերված բողոքները, որոնցով կալանավորումը որպես խափանման միջոց է ընտրվել Վերաքննիչ դատարանի կողմից:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

58. Դիմումատուն բողոքել է, որ 2005 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ իր կալանքի ժամկետը երկարացնելը եղել է անօրինական, քանի որ որոշումից առաջ իր կալանքը հիմնված չի եղել դատարանի որոշման վրա, ինչը պահանջվում է օրենքով: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը, որը սահմանում է հետեւյալը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության եւ անձնական անձեռնմխելիության

իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետեյալ դեպքերում եւ օրենքով սահմանված կարգով.

...

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար[:]»:

Ա. Ընդունելիությունը

59. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Կառավարությունը

60. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի՝ 2005 թվականի դեկտեմբերի 29-ի կալանքի ժամկետի երկարացումը համապատասխանել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքներին: 2004 թվականի հուլիսի 12-ին Համայնքային դատարանը երկարացրել է նրա կալանքի ժամկետը երկու ամսով, մասնավորապես մինչեւ 2004 թվականի սեպտեմբերի 18-ը: 2004 թվականի սեպտեմբերի 13-ին՝ այդ ժամկետը լրանալուց հինգ օր առաջ, ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումատուի կալանքի տակ մնալու ժամկետի ընթացքը կասեցվել է, քանի որ նրան հնարավորություն էր տրվել ծանոթանալու գործի նյութերին: Այսպիսով, այդ

հոդվածի համաձայն՝ քննչական մարմինը դեռ հինգ օր կարող էր դիմումատուին պահել կալանքի տակ: 2005 թվականի հոկտեմբերի 14-ին գործը ուղարկվել է լրացուցիչ նախաքննության: 2005 թվականի դեկտեմբերի 16-ին վերջին ատյանում Վճռաբեկ դատարանը հաստատել է այս որոշումը: Այդուհանդերձ, գործի նյութերը ուղարկվել են Գլխավոր դատախազություն դեկտեմբերի 26-ին: Քանի որ քննչական մարմինը դիմումատուին կալանքի տակ պահելու համար դեռ ունեցել է հինգ օր, ժամկետի լրանալու օրը համարվել է դեկտեմբերի 30-ը՝ գործի նյութերի փոխանցման օրվանից հաշվված:

61. Կառավարությունն այնուհետև պնդել է, որ դիմումատուին 2005 թվականի հոկտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 29-ը կալանքի տակ պահելը եղել է օրինական: Գործը լրացուցիչ քննության ուղարկելուց հետո մինչդատական վարույթն ու կալանքը վերսկսվել են Վճռաբեկ դատարանի որոշման կայացման օրվանից, այն է՝ 2005 թվականի դեկտեմբերի 16-ը, եւ հետեւաբար մինչև այդ օրը դիմումատուն գտնվել է կալանքի տակ դատական վարույթի ընթացքում ՔԴՕ-ի 312-րդ հոդվածի հիմքով: 2005 թվականի դեկտեմբերի 16-ից 29-ը դիմումատուն կալանքի տակ է գտնվել Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման հիման վրա:

բ) Դիմումատուն

62. Դիմումատուն նշել է, որ քննիչի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 27-ին ներկայացված միջնորդության մեջ կատարված հայտարարությունը կալանքի ժամկետի՝ 2005 թվականի դեկտեմբերի 30-ին լրանալու մասին չի համապատասխանել իրականությանը: Նրա մինչդատական կալանքի ժամկետը երկարացվել է մինչև 2004 թվականի սեպտեմբերի 18-ը, եւ իրականում նա այդ ողջ ժամանակահատվածն անցկացրել է կալանքի տակ: Կառավարության առարկություններն առ այն, որ քննչական մարմինը, 2004 թվականի հուլիսի 12-ի որոշման համաձայն, դիմումատուին մինչդատական կալանքի տակ պահելու համար ուներ եւս հինգ օր, հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածին: Այսպիսով, 2005

թվականի դեկտեմբերի 16-ից 29-ն ընկած ժամանակահատվածում դիմումատուն կալանքի տակ է պահվել առանց դատարանի համապատասխան որոշման: Նույնը վերաբերում է 2004 թվականի սեպտեմբերի 18-ին հաջորդած ժամանակահատվածին:

63. Նույնիսկ ենթադրելով, որ նրա մինչդատական կալանքը վերսկսվել է 2005 թվականի դեկտեմբերի 16-ին, եւ քննչական մարմինը, ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի համաձայն, ուներ եւս հինգ օր դիմումատուին կալանքի տակ պահելու համար, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում թերեւս առկա է, քանի որ դատարանի՝ 2005 թվականի դեկտեմբերի 29-ին կայացրած կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշման օրվանից անցել էր 13 օր: Կառավարությունը սա արդարացրել է այն փաստով, որ 2005 թվականի դեկտեմբերի 26-ին գործի նյութերը փոխանցվել են Գլխավոր դատախազություն, ինչն անընդունելի է եղել, քանի որ այն ենթադրել է, որ անձն առանց համապատասխան դատական որոշման եւ անորոշ ժամկետով կարող է մնալ կալանքի տակ միայն այն պատճառով, որ գործի նյութերը ուշացումով փոխանցվել են մի պետական մարմնից մյուսին: Ավելին, եթե նրա մինչդատական կալանքի տակ պահվելու ժամկետի սկիզբը եղել է 2005 թվականի դեկտեմբերի 16-ը, ապա այդ որոշման ընդունման եղանակը հակասել է ՔԴՕ-ին, մասնավորապես՝ մինչդատական վարությամբ կալանք կիրառելիս հստակ ժամկետային սահմանափակումներ սահմանելու պահանջին: Եվ վերջապես, հայտնի չի եղել, թե 2005 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ կալանքի որ ժամկետն է երկարացվել: 2005 թվականի հոկտեմբերի 14-ից դեկտեմբերի 16-ի ընթացքում կայացված որոշումները դիմումատուի կալանքի համար ոչ մի ժամկետային սահմանափակումներ չեն սահմանել: Այսպիսով, համապատասխան նորմերի բացակայության պայմաններում անձին առանց օրինական հիմքի կալանքի տակ պահելու պրակտիկան, որի հետեւանքով կալանավորվածն առանց դատարանի թույլտվության կարող է շարունակաբար մնալ կալանքի տակ, չի համապատասխանում իրավական որոշակիության եւ կամայականություններից պաշտպանվելու սկզբունքին:

2. Դատարանի գնահատականը

64. Դատարանը վերստին նշում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածը երաշխավորում է ազատության եւ անձնական անձեռնմխելիության հիմնարար իրավունքը: Կոնվենցիայի իմաստով այդ իրավունքը կարելու է նշանակություն ունի «ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս *Շը Ուայլդը, Ումսը եւ Վերսիպն ընդդեմ Բելգիայի* [*De Wilde, Ooms and Versyp v. Belgium*], 1971 թվականի հունիսի 18, § 65, շարք Ա, թիվ 12, եւ *Վինթերվեյն ընդդեմ Նիդեռլանդների* [*Winterwerp v. the Netherlands*], 1979 թվականի հոկտեմբերի 24, § 37, շարք Ա, թիվ 33):

65. 5-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված «օրինական» եւ «օրենքով սահմանված կարգով» արտահայտություններն ըստ էության վերագրվում են ներպետական օրենսդրությանը եւ սահմանում են դրա նյութաիրավական եւ դատավարական կանոններին համապատասխանելու պարտավորությունը (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Բենհամն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Benham y. the United Kingdom*], 1996 թվականի հունիսի 10, § 41, *Ձեկույցներ* 1996-III, եւ *Ասանիձեն ընդդեմ Վրաստանի* [ՄՊ] [*Assanidze v. Georgia* [GC]], թիվ 71503/01, § 171, ՄԻԵԴ 2004-II):

66. Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրությամբ նախատեսված կալանավորման «օրինականությունը» առաջնային, բայց ոչ միշտ վճռորոշ տարր է: Դատարանը պետք է նաեւ համոզվի, որ քննարկվող ժամանակահատվածի ընթացքում կալանքի տակ պահելը համահունչ է եղել 5-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներին, այն է՝ կանխել կամայական կերպով մարդկանց ազատությունից զրկելը: Ավելին, Դատարանը պետք է պարզի, թե արդյոք ներպետական օրենսդրությունն ինքնին համապատասխանում է Կոնվենցիային, ներառյալ դրանում ամրագրված եւ կիրառվող ընդհանուր սկզբունքները (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, վերելում հիշատակված՝ *Վինթերվեյնի* գործը, § 45, եւ *Էրկալոն ընդդեմ Նիդեռլանդների* [*Erkalo v. the Netherlands*], 1998 թվականի սեպտեմբերի 2, § 52, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1998-VI):

67. Վերջին հարցի կապակցությամբ Դատարանն ընդգծում է, որ

ազատությունից զրկելու հարցը քննելիս առանձնապես կարևոր է իրավական որոշակիության համընդհանուր սկզբունքի պահպանումը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ ներպետական օրենսդրությամբ նախատեսված՝ ազատությունից զրկելու պայմանները հստակ սահմանված լինեն, եւ օրենսդրությունը իր կիրառելիության մեջ ինքնին կանխատեսելի լինի, որպեսզի համապատասխանի Կոնվենցիայով նախատեսված «օրինականության» չափանիշներին, որոնց համաձայն օրենսդրությունը պետք է բավարար չափով հստակ լինի, որպեսզի անձին հնարավորություն ընձեռի անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդատվության պայմաններում, տվյալ հանգամանքներում ողջամիտ ժամկետներում կանխատեսել կատարված գործողության հնարավոր հետեւանքները (տե՛ս *Ստիլը եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Steel and Others v. the United Kingdom*], 1998 թվականի սեպտեմբերի 23, § 54, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1998-VII):

68. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Դատարանը դիտարկում է, որ Հայաստանի Հանրապետությանը հանձնելուց հետո 2004 թվականի մայիսի 18-ին դիմումատուն քննիչի միջնորդությամբ կալանավորվել է՝ երկու ամիս ժամկետով: Այնուհետեւ 2004 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ նրա կալանքի ժամկետը երկարացվել է եւս երկու ամսով: Նախաքննության ավարտից եւ դիմումատուի գործը դատական քննության փոխանցելուց հետո՝ 2004 թվականի հոկտեմբերի 6-ին, Համայնքային դատարանն իր նախաձեռնությամբ եւ ՔԴՕ-ի 293-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով երկարացրել է կալանքի ժամկետը: Ավելի քան մեկ տարի տեւած դատական վարույթից հետո՝ 2005 թվականի հոկտեմբերի 14-ին, գործը քննող դատարանը որոշել է գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության: Նույն որոշմամբ դատարանը որոշել է դիմումատուին պահել կալանքի տակ: Վերաքննիչ դատարանը եւ Վճռաբեկ դատարանը սույն որոշումը հաստատել են 2005 թվականի, համապատասխանաբար, նոյեմբերի 9-ին եւ դեկտեմբերի 16-ին: 2005 թվականի դեկտեմբերի 26-ին գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն, եւ 2005 թվականի դեկտեմբերի 27-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել կալանքի ժամկետը երկու ամսով երկարացնելու

վերաբերյալ: Միջնորդության մեջ նշվել է, որ դիմումատուի կալանքն ավարտվելու է 2005 թվականի դեկտեմբերի 30-ին: 2005 թվականի դեկտեմբերի 29-ին դատարանը բավարարել է միջնորդությունը:

69. Դատարանն այս առնչությամբ նշում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը տարբերակում է մինչդատական եւ դատական վարույթների ընթացքում կիրառված կալանքները եւ երկու դեպքերի համար սահմանում երկու առանձին ընթացակարգեր: Մասնավորապես, մինչդատական վարույթի ընթացքում կիրառված կալանքը կամ դրա երկարացումը սահմանվում են միայն դատարանի թույլտվությամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդության հիման վրա եւ ամեն անգամ երկու ամիսը չգերազանցող ժամկետներով (ՔԴՕ-ի 136-րդ հոդվածի 2-րդ մաս, 138-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասեր, 139-րդ հոդվածի 3-րդ մաս), մինչդեռ դատական վարույթի ընթացքում դատարանը կալանք կիրառելու կամ այն երկարացնելու մասին որոշում է կայացնում իր իսկ նախաձեռնությամբ՝ առանց հստակ ժամկետներ սահմանելու (ՔԴՕ-ի 136-րդ հոդվածի 2-րդ մաս եւ 138-րդ հոդվածի 6-րդ մաս): Ավելին, մինչդատական վարույթի ընթացքում կալանքը երկարացնելու մասին միջնորդությունը պետք է ներկայացվի սահմանված կալանքի ժամկետը լրանալուց տասն օր առաջ, իսկ դատարանի որոշումը պետք է կայացվի դրանից հինգ օր առաջ: Եթե գործն ուղարկվում է լրացուցիչ նախաքննության, ինչպես դիմումատուի գործում է, ապա կիրառելի են մինչդատական վարույթի ընթացքում կալանքը կարգավորող նորմերը: Հետեւաբար պատասխանելու համար այն հարցին, թե արդյոք 2005 թվականի դեկտեմբերի 29-ի որոշման համաձայն դիմումատուի կալանքի երկարացումը համապատասխանում էր ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներին, Դատարանը պետք է նախ անդրադառնա այդ որոշմանը նախորդած կալանքի բնույթին:

70. Դատարանը նշում է, որ դատական վարույթի ընթացքում դիմումատուի կալանքը սկսվել է 2004 թվականի հոկտեմբերի 6-ին: Դատարանը որեւէ պատճառ չունի կասկածի տակ դնելու այդ որոշման օրինականությունը, որով թույլատրվել էր կալանքի այն ժամկետը, որը կայացվել էր այդ օրն առաջին ատյանի դատարանի

կողմից ՔԴՕ-ի 293-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով: Այնուամենայնիվ, 2005 թվականի հոկտեմբերի 14-ին առաջին ատյանի նույն դատարանը իր իսկ նախաձեռնությամբ որոշել է գործն ուղարկել լրացուցիչ քննության: Դատարանն այս կապակցությամբ նշում է, որ Կառավարության պնդումն այն մասին, թե մինչդատական վարույթը վերսկսվել է ոչ թե այդ օրը, այլ այն օրը, երբ այդ որոշումը անփոփոխ է թողնվել բարձրագույն ատյանի դատարանի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 16-ին, չի հիմնավորվում ներպետական որեւէ իրավական նորմով: Իսկապես, քրեական դատավարության օրենսգրքում ոչ մի իրավական նորմ չկա, որը հստակ սահմանում է մինչդատական վարույթի վերսկսման օրը, երբ գործն ուղարկվում է լրացուցիչ քննության: Այսպիսով, պարզ չէ, թե 2005 թվականի հոկտեմբերի 14-ից դեկտեմբերի 16-ը դիմումատուի գործի մասով կալանքի որ նորմերն են կիրառելի եղել՝ մինչդատական, թե դատական վարույթների նորմերը: Հետեւաբար հնարավոր չէ պնդել, որ այդ ժամանակահատվածում դիմումատուի նկատմամբ կիրառված կալանքը հիմնված է եղել պարզ եւ կանխատեսելի նորմերի վրա:

71. 2005 թվականի դեկտեմբերի 16-ից 29-ն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ Դատարանը նշում է, որ այստեղ Կառավարության պնդումներն ավելի հակասական են: Սկզբում Կառավարությունը պնդել է, որ կալանքի այս հատվածը ներառել է այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է եղել քրեական գործը Գլխավոր դատախազություն ուղարկելու համար (2005 թվականի դեկտեմբերի 16-ից 29-ը), այդ թվում նաեւ դիմումատուին կալանքի տակ պահելու համար քննչական մարմնի տրամադրության տակ եղած եւս հինգ օրը՝ համաձայն 2004 թվականի հուլիսի 12-ի որոշման (2005 թվականի դեկտեմբերի 26-ից 30-ը): Այդուհանդերձ, հետագայում Կառավարությունը պնդել է, որ վճռաբեկ դատարանի՝ 2005 թվականի դեկտեմբերի 16-ի որոշման համաձայն՝ դիմումատուն կալանքի տակ է գտնվել այդ ողջ ընթացքում: Ինչ վերաբերում է Կառավարության առաջին պնդմանը, ապա Դատարանը եւս մեկ անգամ դիտարկում է, որ այն հիմնավորված չէ ներպետական որեւէ իրավական նորմով: Ինչ վերաբերում է երկրորդ պնդմանը, ապա ճիշտ է, որ 2005 թվականի դեկտեմբերի 16-ի իր

որոշումով Վճռաբեկ դատարանն անփոփոխ է թողել լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշումը, այդուհանդերձ, նաեւ նշել է, որ դիմումատուն պետք է մնա կալանքի տակ: Սակայն անվիճելի է, որ այդ օրվանից սկսած վարույթը կրկին գտնվել է մինչդատական փուլում եւ, ինչպես արդեն նշվել է վերելում, մինչդատական վարույթում կալանքը կարող է սահմանվել միայն դատարանի կողմից՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ եւ ժամկետի հստակ նշումով: Տվյալ դեպքում այդպիսի միջնորդություն ներկայացված չի եղել, եւ Վճռաբեկ դատարանը չի սահմանել ոչ մի ժամկետ: Հետեւաբար այդ ժամանակահատվածում դիմումատուի նկատմամբ կալանքի կիրառումը հակասել է ներպետական դատավարական նորմերին:

72. Վերոնշյալ նկատառումները Դատարանի համար բավարար են եզրահանգելու, որ դիմումատուի՝ 2005 թվականի դեկտեմբերի 14-ից 29-ն ընկած ժամանակահատվածի կալանքը չի համապատասխանում Կոնվենցիայով սահմանված օրինականության պահանջներին: Դա պայմանավորված է եղել կալանքի ընթացակարգը կարգավորող հստակ նորմերի բացակայությամբ, երբ առաջին ատյանի դատարանը կայացնում էր գործը լրացուցիչ քննության ուղարկելու մասին որոշում:

73. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

74. Դիմումատուն բողոքել է, որ իր շարունակական կալանքը խախտել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված երաշխիքները, որը սահմանում է հետեւյալը.

«3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք....ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչեւ դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու

երաշխիքներով»:

Ա. Ընդունելիությունը

75. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Կառավարությունը

76. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի կալանքի ժամկետը չի խախտել «ողջամիտ ժամկետի» պահանջը: Դիմումատուն մեղադրվել է ծանր հանցագործություն կատարելու մեջ, եւ առկա է եղել փախուստի դիմելու վտանգ: Նրա նկատմամբ կալանքի կիրառումը նաեւ անհրաժեշտ է եղել հասարակական կարգը պահպանելու համար: Դա տեսել է միայն 8 ամիս եւ 25 օր, որն ընդունելի է եղել սույն գործի փաստական հանգամանքներում:

77. Կառավարությունն այնուհետև նշել է, որ դիմումատուի դեմ հարուցված վարույթն իրականացվել է հատուկ ջանասիրությամբ: Նա մեղադրվել է մի քանի անձանց սպանության եւ ապօրինի կերպով զենք պահելու մեջ: Դա ծավալուն գործ է եղել՝ ենթադրյալ հանցանքների բազմաթիվ դրվագներով, եւ անհրաժեշտ է եղել իրականացնել բազմաթիվ քննչական գործողություններ, քննել մեծ թվով վկաների եւ ուսումնասիրել փաստեր: Հետեւաբար, բազմիցս անհրաժեշտություն է ծագել հետաձգելու դատական նիստերը:

բ) Դիմումատուն

78. Դիմումատուն նշել է, որ հանցագործության ծանրությունը, որի մեջ ինքը մեղադրվել է, բավարար հիմք չէր եզրահանգելու, որ ինքը կդիմեր փախուստի: Իր կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումները մեխանիկորեն են ընդունվել եւ հիմնված են եղել ստանդարտ ձեւակերպումների վրա: Իր կալանքի ժամկետը չի համապատասխանել «ողջամիտ ժամկետի» պահանջին: Երբ գործը երկրորդ անգամ ներկայացվել է դատարան, 2006 թվականի հունիսի 19-ին նշանակված դատական նիստը տեղի չի ունեցել եւ հետաձգվել է անորոշ ժամանակով: Հաջորդ լսումը նշանակվել է 2006 թվականի հոկտեմբերի 16-ին: Այդ ժամանակաշրջանում դիմումատուի կալանքի ժամկետը երկարացնելու մասին ոչ մի դատական որոշում չի կայացվել: 2006 թվականի նոյեմբերի 20-ին դատարանը մերժել է դիմումատուին ազատ արձակելու մասին միջնորդությունը՝ չնայած այն փաստին, որ տուժողներն ու հիմնական վկաներն արդեն հարցաքննվել էին, եւ դիմումատուն չէր կարող նրանց վրա անօրինական ազդեցություն գործադրել:

2. Դատարանի գնահատականը

79. Նախ Դատարանը պետք է որոշի դիտարկման ենթակա ժամանակահատվածը: Դատարանը նշում է, որ դիմումատուի մինչդատական կալանքը տեւել է 2004 թվականի մայիսի 18-ից մինչեւ իր դատապարտումը՝ 2007 թվականի սեպտեմբերի 24-ը, այն է՝ երեք տարի, չորս ամիս եւ վեց օր:

80. Դատարանը վերահաստատում է, որ կալանքի ժամկետի տեւողության ողջամտությունը ամեն դեպքի համար առանձին պետք է գնահատվի՝ հաշվի առնելով դրա բնորոշ առանձնահատկությունները: Յուրաքանչյուր գործով շարունակական կալանքը կարող է արդարացվել միայն իրական հանրային շահի առկայության դեպքում, որը, չնայած անմեղության կանխավարկածին, գերակշռում է ազատության իրավունքին: Առաջին հերթին ազգային դատական մարմիններն են կոչված քննելու այդ պարտադիր շահի առկայությանը կողմ կամ դեմ փաստող հանգամանքները եւ դրանք ամրագրելու ազատ արձակման մասին միջնորդությունների կապակցությամբ կայացրած իրենց որոշումներում:

Հիմնականում այս որոշումներում նշված պատճառների եւ դիմումատուի բողոքներում սահմանված փաստերի հիման վրա է Դատարանը որոշում, թե արդյոք եղել է Կոնվեցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում: Ողջամիտ կասկածի առկայությունը, որ ձերբակալված անձը կատարել է հանցանք, հանդիսանում է *sine qua non* պայման (պարտադիր պայման)՝ շարունակվող կալանքի օրինականության համար, սակայն որոշ ժամանակ անց այն արդեն բավարար չէ: Դատարանն այնուհետեւ պետք է որոշի, թե արդյոք դատական մարմինների կողմից տրված մյուս հիմքերը «հիմնավոր» ու «բավարար» են եղել ազատությունից զրկելու արդարացումը շարունակելու համար (տե՛ս Կուդլան ընդդեմ Լեհաստանի [ՄՊ] [*Kudła v. Poland* [GC]], թիվ 30210/96, §§ 110-111, ՄԻԵԴ 2000-XI, եւ Ժեցիուսն ընդդեմ Լիտվայի [*Ječius v. Lithuania*], թիվ 34578/97, § 93, ՄԻԵԴ 2000-IX):

81. Կոնվենցիայի նախադեպային իրավունքով մշակվել են մինչեւ դատավճիռն անձին կալանքի տակ պահելու չորս հիմնական ընդունելի հիմնավորումներ. մեղադրյալի՝ դատաքննությանը չներկայանալու վտանգը (տե՛ս Ստոգմյուլերն ընդդեմ Ավստրիայի [*Stögmüller v. Austria*], 1969 թվականի նոյեմբերի 10, § 15, շարք Ա, թիվ 9), վտանգը, որ մեղադրյալն ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացումը (տե՛ս Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի [*Wemhoff v. Germany*], 1968 թվականի հունիսի 27, § 14, շարք Ա, թիվ 7) կամ կկատարի նոր իրավախախտումներ (տե՛ս Մացնետերն ընդդեմ Ավստրիայի [*Matznetter v. Austria*], 1969 թվականի նոյեմբերի 10, § 9, շարք Ա, թիվ 10) կամ կխախտի հասարակական կարգը (տե՛ս վերելում հիշատակված՝ *Լեթելիերի* գործը, § 51):

82. Եթե սահմանված հիմքերը «հիմնավոր» եւ «բավարար» են, Դատարանը պետք է նաեւ պարզի, թե արդյոք ազգային իրավասու մարմինները վարույթի ընթացքում ցուցաբերել են «հատուկ ջանասիրություն»: Քննության ծավալը եւ առանձնահատկություններն այս առումով գործոններ են, որոնք պետք է հաշվի առնվեն (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, Լետելիեն ընդդեմ Ֆրանսիայի [*Letellier v. France*], 1991 թվականի հունիսի 26, § 35, շարք Ա, թիվ 207, եւ Վան դեռ Թանգն

ընդդեմ Իսպանիայի [*Van der Tang v. Spain*], 1995 թվականի հուլիսի 13, § 55, շարք Ա, թիվ 321):

83. Դատարանն ընդունում է, որ հանցանքները, որոնք կատարելու մեջ դիմումատուն կասկածվել է, իրենց բնույթով շատ լուրջ են եղել եւ պատժվել են խստագույն կերպով, այն է՝ ցմահ ազատազրկմամբ: Այդուհանդերձ, անձին մեղսագրվող՝ ծանր հանցանքների կատարման հիմնավոր կասկածի առկայությունը թեեւ հիմնավոր գործոն է, սակայն չի կարող ինքնին արդարացնել մինչդատական վարույթի ընթացքում երկարաժամկետ կալանքի կիրառումը (տե՛ս Թոմասին ընդդեմ Ֆրանսիայի [*Tomasi v. France*], 1992 թվականի օգոստոսի 27, § 89, շարք Ա, թիվ 241-Ա):

84. Ինչ վերաբերում է դիմումատուի փախուստի դիմելու վտանգին, ապա Դատարանը նշում է, որ այս հիմքն անուղղակիորեն նշված է եղել 2002 թվականի հուլիսի 5-ի առաջին դատական որոշման մեջ, որով դիմումատուի նկատմամբ նշանակվել է կալանք (տե՛ս վերելում՝ 7-րդ պարբերությունը): Այդուհանդերձ, հաջորդ անգամը, երբ Հայաստանի Հանրապետության դատարաններն ուղղակիորեն անդրադարձել են այս հիմքին, եղել է 2006 թվականի փետրվարին՝ 2004 թվականի մայիսին դիմումատուի ձերբակալումից մոտավորապես երկու տարի անց: Դատարանը համարում է, որ ներպետական դատարանների կողմից հիմնավորումների տրամադրումը նման մեծ ընդհատումներով չի կարող համապատասխանել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով դիմումատուի շարունակական կալանքը հիմնավորելու պահանջներին:

85. Ավելին, անդրադառնալով վարույթի իրականացմանը՝ Դատարանն ընդունում է, որ գործը բավական բարդ է եղել, որը պահանջել է բազմաթիվ քննչական գործողությունների կատարում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով դիմումատուի ազատությունից զրկված լինելը՝ իշխանությունները պետք է գործեին հատուկ ջանասիրությամբ, ինչը նրանք չեն կատարել: Այս առումով Դատարանը նշում է, որ վարույթի էական եւ անհարկի ձգձգումը վերագրելի է իշխանությունների վարքագծին: Մասնավորապես, քննչական մարմնի կողմից

վարույթի սկզբնական փուլում օբյեկտիվ էլ բազմակողմանի քննություն չանցկացնելու պատճառով դատարանը, որին գործն ըստ էության քննության էր հանձնվել, ստիպված է եղել մի ամբողջ տարվա ընթացքում անցկացնել 52 դատական նիստ եւ քննել բազմաթիվ վկաների զուտ այն բանի համար, որ վերջում եզրահանգի, որ անկարող է որոշում ընդունել դիմումատուի մեղավորության կամ անմեղության մասին եւ ստիպված է եղել գործն ուղարկել լրացուցիչ քննության (տե՛ս վերելում՝ 26-րդ եւ 27-րդ պարբերությունները): Ավելին, այդպիսի որոշման ընդունումը բողոքարկման ընթացակարգ սկսելու պատճառ է հանդիսացել եւ հանգեցրել է վարույթի ձգձգմանը՝ նվազագույնը երկու ամսով (տե՛ս վերելում՝ 27-32-րդ պարբերությունները): Վերջապես, ոչ մի պատճառաբանություն չի տրվել 2006 թվականի հունիսի 2-ից մինչեւ հոկտեմբերի 16-ը չորս ամսվա ընդմիջման համար, որի ընթացքում բացարձակապես ոչ մի վարույթ չի իրականացվել (տե՛ս վերելում՝ 45-47-րդ պարբերությունները): Այսպիսով, մարմինների կողմից ջանասիրության բացակայության պատճառով դիմումատուի կալանքն ընդհանուր առմամբ նվազագույնը մեկ ու կես տարով ձգձգվել է:

86. Վերոնշյալ նկատառումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ դիմումատուն պահվել է շարունակական կալանքի տակ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված «ողջամիտ ժամկետի» պահանջի խախտմամբ:

87. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

88. Դիմումատուն բողոքել է Վճռաբեկ դատարանին ներկայացրած իր բողոքն առանց քննության թողնելու մասին 2006 թվականի փետրվարի 9-ի

որոշման դեմ: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը, 6-րդ հոդվածի 1-ին կետը եւ 13-րդ հոդվածը: Դատարանը գտնում է, որ այս բողոքը պետք է դիտարկել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի շրջանակներում, որը սահմանում է հետեւյալը.

«4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում եւ կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

Ընդունելիությունը

89. Դիմումատուն նշել է, որ ՔԴՕ-ի 403-րդ հոդվածն իրեն Վերաքննիչ դատարանի՝ 2006 թվականի փետրվարի 3-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք է տալիս: ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ 2005 թվականի դեկտեմբերի 8-ի որոշումը միայն խորհրդատվական բնույթ է ունեցել եւ չէր կարող համարվել օրենք: Հետեւաբար, դիմումատուի բողոքը քննելուց հրաժարվելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումն անօրինական էր:

90. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն մինչդատական վարույթի ընթացքում կալանքի ժամկետը երկարացնելու որոշումների դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք չի ունեցել: Նման որոշումների բողոքարկումը նախատեսված է ՔԴՕ-ի 137-րդ հոդվածի 5-րդ մասով եւ 288-րդ հոդվածի 1-ին մասով, որոնք սահմանում են, որ բողոք կարող է ներկայացվել Վերաքննիչ դատարան: 2005 թվականի դեկտեմբերի 6-ին ներկայացված սահմանադրական բարեփոխումները փոփոխություններ մտցրեցին Վճռաբեկ դատարանի կարգավիճակի մեջ, որի դերը, 92-րդ հոդվածի համաձայն, սահմանափակվեց օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությամբ: Արդյունքում, ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը, որը ներպետական իրավունքի խորհրդատվական եւ ոչ պարտավորեցնող մեկնաբանումներ է տրամադրում, դատական պրակտիկան նոր Սահմանադրության դրույթներին

համապատասխանեցնելու նպատակով 2005 թվականի դեկտեմբերի 8-ին կայացրել է թիվ 83 որոշումը:

91. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը Պայմանավորվող պետություններին չի պարտավորեցնում սահմանել կալանքի օրինականության ստուգման եւ ազատ արձակելու մասին դիմումների քննության երկաստիճան համակարգ: Այդուհանդերձ, պետությունը, որը սահմանել է նման համակարգ, պետք է սկզբունքորեն կալանավորվածների համար ապահովի այն նույն երաշխիքները, որոնք սահմանված են առաջին ատյանում (տե՛ս Թոտն ընդդեմ Ավստրիայի [*Toth v. Austria*], 1991 թվականի դեկտեմբերի 12, § 84, շարք Ա, թիվ 224): Ավելին, չնայած Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը կալանքի օրինականության վերաբերյալ որոշումները բողոքարկելու իրավունք չի երաշխավորում, այս դրույթի նպատակից հետեւում է, որ դրա պահանջները պետք է հարգվեն վերաքննող դատարանների կողմից, եթե բողոքը բերվում է կալանքի օրինականության վերաբերյալ որոշման դեմ (տե՛ս *Ռութենն ընդդեմ Նիդերլանդների* [*Rutten v. the Netherlands*], թիվ 32605/96, § 53, 2001 թվականի հուլիսի 24):

92. Դատարանը նշում է, որ տվյալ գործով առաջին հարցը, որին պետք է պատասխանել, այն է, թե արդյոք դիմումատուն, ներպետական օրենսդրության համաձայն, առաջին ատյանի դատարանի՝ քննության ընթացքում իր կալանքի ժամկետը երկարացնելու որոշման դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք ունեցել է, թե ոչ: Անդրադառնալով համապատասխան ներպետական նորմերին, իսկապես պարզ է դառնում, որ ՔԴՕ-ի 137-րդ հոդվածի 5-րդ մասը եւ 288-րդ հոդվածի 1-ին մասը, որոնցով կարգավորվել է այս հարցը, ուղղակիորեն սահմանում են Վերաքննիչ դատարան բողոք ներկայացնելու իրավունք, մինչդեռ Վճռաբեկ դատարանի մասին ոչինչ չի ասվում (տե՛ս վերելում՝ 54-րդ պարբերությունը): Այսպիսով, հնարավոր չէ ասել, որ խնդրո առարկա ժամանակահատվածում դիմումատուին օրենքով հստակորեն վերապահված է եղել մինչդատական վարույթի ընթացքում կալանքի մասին որոշումների դեմ Վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելու իրավունք:

93. Ճիշտ է, որ 2005 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական բարեփոխումներից առաջ այդպիսի իրավունք պրակտիկայում, բայց ոչ օրենքով, գոյություն ունեցել է: Այդուհանդերձ, սահմանադրական բարեփոխումներից հետո այդ պրակտիկան դադարեցվել է, եւ այդ բարեփոխումներով, *inter alia*, վերասահմանվել է Վճռաբեկ դատարանի կարգավիճակը, որի դերը սահմանափակվել է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթով (տե՛ս վերելում՝ 56-րդ եւ 57-րդ պարբերությունները): Դատարանը գտնում է, որ այն փաստը, որ վերոնշյալ սահմանադրական բարեփոխումներից հետո դիմումատուն պրակտիկայում դադարել է ունենալ այդ իրավունքը, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքերով խնդիր չի առաջացնում:

94. Հետեւաբար գանգատի այս մասն ակնհայտ անհիմն է եւ պետք է մերժվի՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

95. Դիմումատուն նաեւ ներկայացրել է մի շարք այլ բողոքներ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի մասով այն մասին, որ իր կալանքը հիմնված չի եղել ողջամիտ կասկածի վրա, որ մինչդատական վարույթի ընթացքում իր կալանքը տեսել է ավելի երկար, քան ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 5-րդ մասով թույլատրված մեկ տարի առավելագույն ժամկետը, եւ որ 2004 թվականի սեպտեմբերի 18-ից 24-ն ընկած ժամանակահատվածում կալանքի համար բացակայել է դատական որեւէ որոշում:

96. Իր տրամադրության տակ առկա բոլոր նյութերը հաշվի առնելով եւ այնքանով, որքանով այդ բողոքներն իր իրավասության շրջանակներում են՝ Դատարանը գտնում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով նախատեսված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ հատկանիշ: Հետեւաբար գանգատի այս մասը պետք է մերժվի ակնհայտ անհիմն լինելու պատճառով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

97. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

98. Դիմումատուն պահանջել է 100 000 եվրո՝ որպես նյութական վնասի հատուցում: Այս պահանջը ներառում է բաց թողնված եկամուտը՝ 80 000 եվրո գումարի չափով, կամ որպես այլընտրանք՝ աշխատավարձի կորուստը, որը նա կալանավորված չլինելու դեպքում կարող էր աշխատել՝ 4 000 եվրո գումարի չափով, ինչպես նաև կալանքի ընթացքում ընտանիքի կողմից իր ստացած ծանրոցներին համարժեք գումարը՝ ընդհանուր 20 000 եվրո գումարի չափով: Դիմումատուն նաև պահանջել է 250 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

99. Կառավարությունը պնդել է, որ նյութական վնասի եւ ենթադրյալ խախտումների միջեւ պատճառահետեւանքային կապ չկա: Դիմումատուն բաց թողնված եկամուտների չափի հաշվարկի հիմքերի մասին ոչ մի պատճառաբանում չի ներկայացրել, իսկ իր կորցրած աշխատավարձի մասին պահանջը մտացածին է: Ծանրոցների արժեքի վերաբերյալ իր պահանջը անհիմն է, քանի որ առնչվում է երրորդ անձի կատարած ծախսերին: Կառավարությունը նաև պահանջել է, որ Դատարանը մերժի դիմումատուի ոչ նյութական վնասի հատուցման պահանջը:

100. Դատարանը նշում է, որ ենթադրյալ բաց թողնված եկամուտի վերաբերյալ դիմումատուի պահանջը մտացածին բնույթի է եւ հիմնված չէ որեւէ ապացույցի վրա: Նմանապես, ոչ մի ապացույց չի ներկայացվել ծանրոցների արժեքի պահանջի վերաբերյալ: Հետեւաբար Դատարանը մերժում է նյութական վնասի հատուցման մասին դիմումատուի պահանջը: Մյուս կողմից, Դատարանը դիմումատուին շնորհում է 6 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

101. Դիմումատուն նաև պահանջել է 227 եվրո՝ փոստային ծախսերի համար:

102. Կառավարությունը պնդել է, որ այդ փոստային ծախսերը անհրաժեշտ

չեն եղել, քանի որ դիմումատուն հնարավորություն է ունեցել օգտվելու ավելի մատչելի փոստային ծառայություններից՝ իր օգտագործած էքսպրես ծառայությունների փոխարեն:

103. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվել է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործով, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ վերը նշված չափորոշիչները՝ Դատարանը ողջամիտ է համարում [դիմումատուին] շնորհել 227 եվրո՝ որպես Դատարանի վարույթի ընթացքում կատարած ծախսերի փոխհատուցում:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

104. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Հայտարարում է* դիմումատուի՝ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 29-ի որոշումից առաջ ընկած ժամանակահատվածում կալանքի օրինականության եւ իր կալանքի տեւողության վերաբերյալ բողոքներն ընդունելի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի հիմքով, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի:

2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի

խախտում.

4. *Վճռում է, որ՝*

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 6 000 եվրո (վեց հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 227 եվրո (երկու հարյուր քսանյոթ եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. *Մեքժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:*

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2012 թվականի հունիսի 5-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Մարիալենա Յիրլի

Ջուսեփ Կասադեայ

Քարտուղարի տեղակալ

Նախագահ